ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մեծավան համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մեծավան	Ավագանու հերթական նիստ	14.09.2020թ.	14-00	**Մեծավանի** համայնքապետարան գ. Մեծավան Զ. Անդրանիկի 2

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. Սեպտեմբերի 14-ին Մեծավանի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

Ժամը՝ 14-^{00}

1. Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնութուն հատկացնելու մասին

զեկ. Հ. Քաչակուլյան

3. Մեծավան համայնքի բյուջեից Միխայելովկայի միջնակարգ դպրոցին դրամաշնորհ հատկացնելու մասին

զեկ. Գ. Մարկոսյան

4. Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամաշնորհ հատկացնելու

զեկ. Գ. Մարկոսյան

5. Մեծավան համայնքի բյուջում փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ. Մարկոսյան

ՆԱԽԱԳԻԾ 37-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը.
1. Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնութուն հատկացնելու մասին
3. Մեծավան համայնքի բյուջեից Միխայելովկայի միջնակարգ դպրոցին դրամաշնորհ հատկացնելու մասին
4. Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին դրամաշնորհ հատկացնելու մասին
5. Մեծավան համայնքի բյուջում փոփոխություն կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 38-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդհոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելումասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 39-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԳԱԳԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է.

Միխայելովկայի միջնակարգ դպրոցին հատկացնել 124000/հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ՝ դասասենյակները և միջանցքները ներկելու համար անհրաժեշտ ներկ ձեռք բերելու համար:

ՆԱԽԱԳԻԾ 40-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՄԵԾԱՎԱՆԻ «ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԳԱԳԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է.

Մեծավան համայնքի բյուջեից Մեծավանի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին հատկացնել 600000/վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ ազոտական գութան ձեռք բերելու համար:

ՆԱԽԱԳԻԾ 41-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԳԱԳԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18. և 89. հոդվածներով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33. հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 560000/հինգհարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումարը հատկացնել ֆոնդային բյուջեի 5112 հոդվածի 01. 06. 01 ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից: